	«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԵՆԹԱԿԱՌՈՒՍՈՒՑԻ ՉՆԵՐԻՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտությանթեման՝ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԺ ԱՄԵՐԻԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՄԵԹՈԴՆԵՐԸ

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Քնարիկ Թանգամյան

Ուսումնականհաստատություն՝ Արագածոտն մարզ, քաղաքԱշտարակ, Ն.Աշտարակեցուհամար 1 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն ----------էջ 2-3
2. Հետազոտականհամատեքստ ----------էջ 4-5
3. Գործնականհամատեքստ ----------էջ 5-9
4. Հետազոտությանընթացքը---------- էջ10-17
5. Տվյալներիմշակումևվերլուծություն ----------էջ 18-24
6. Եզրակացություն ----------էջ 25
7. Գրականությունևհավելվածներ ----------էջ 26

«Իմնակավարժականգործունեությանհամոզմունքներից մեկըգրքիդաստիարակչականուժինկատմամբանսահմանհավատնէ: Դպրոցնառաջինհերթինգիրքնէ: Գիրքըդամիհզորզենքէ,առանցորիեսկլինեիհամրկամլուռ: Եսչեմկարողերիտասարդսերնդինասելայնամենիհարյուրերորդ մասը ինչ պետք է և ուզում եմ ասել: Խելացի և ոգևորող գիրքը հաճախ որոշում է մարդու ճակատագիրը»:
Վ. Ա. Սուխոմլինսկի

Ներածություն

Ի՞նչ նպատակ է հետապնդում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը

Մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը: Մի կողմից այդ դասաժամերի ընթացքում զարգանում են ընթերցողական հետաքրքրությունները,երեխաների աշխարհայացքը, նրանց գեղագիտական ճաշակը,գեղարվեստական պատկերավորման միջոցների ընկալումը,նրանց երևակայությունը և ստեղծագործական միտքը: Մյուս կողմից իրագործվում են ծրագրային, չափորոշչային պահանջները, ձևավորում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը երկրորդ դասարանում անցկացվում են շաբաթական մեկ ժամ, իսկ երրորդ և չորրորդ դասարաններում նախընտրելի է անցկացնել երկու ժամ, սակայն երկու շաբաթը մեկ (որպեսզի երրորդ և չորրորդ դասարանի աշակերտներն ավելի շատ ժամանակ ունենան ընթերցելու ծավալուն նյութեր, ինչպես նաև կարողանան երկու դասաժամում քննարկել դրանք):
Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն են՝

- *Ծանոթացնել սովորողներին մանկական գրականության նմուշներին,որոնք կարելի է ներառել ժամանակակից կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ*
- *Հետաքրքրություն ձևավորել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ, զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն:*
- *Կատարելագործել սովորողների գրքերի ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն (կարողություն և սովորություն խորհելու*

գրքի շուրջ մինչև տեքստի ընթերցումը,ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո):

- *Մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ հասարակական արժեքի նկատմամբ:*
- *մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ:*
- *Կձևավորվեն կարդալու կարողություններ, կապահովվի դրանց հետագա զարգացման անընդհատականությունը:*
- *Հայոց լեզվի գործնական ուսուցում կիրականացվի (ճիշտ ընտրված նյութը հնարավորություն կտա սովորեցնել նոր բառեր, արտահայտություններ, որոնք կյուրացվեն և նույնությամբ գործածության մեջ կդրվեն երեխաների խոսքի մեջ):*

1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐՆ ԻՆՉՈՎ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՑ: ԻՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ԴՐԱՆՔ

Ինքնուրույն ընթերցանության դասերն ունեն որոշակի առանձնահատկություններ: Առանց այդ առանձնահատկությունների հաշվառման այդ դասերը չեն կարող իրականացնել իրենց առջև դրված խնդիրները:

- *Յուրաքանչյուր դասին ցանկալի է անցկացնել յուրօրինակ հաշվետվություն այն մասին, թե ինչ են երեխաները ինքնուրույն ընթերցել: Երեխաները դասարան են բերում և ցույց տալիս այն գրքերը, որոնք նրանք ընթերցել են արձակուրդին (ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային), անցած մեկ շաբաթվա ընթացքում (երրորդ և չորրորդ դասարանում) կամ ընթերցում են տվյալ պահին: Ուսուցիչը ստեղծում է այնպիսի իրավիճակ, որտեղ կատարվում է ընթերցած գրքերի վերաբերյալ կարծիքների փոխանակում:*
- *Յուրաքանչյուր դասին երաշխավորություններ է տրվում նոր գրքերի վերաբերյալ: Այդ երաշխավորությունների ձևերը բազմազան են և՛ կարծիքների փոխանակումը, և՛ երաշխավորություն ուսուցչի կողմից տվյալ գրքի ցուցադրումով, և՛ ոչ մեծ ցուցահանդեսի կազմակերպում դասարանում՝թեմատիկ կամ հեղինակային,երաշխավորվող գրքից մի*

հատվածի ընթերցում՝գրքի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու նպատակով,նկարազարդման ցուցադրություն և այլն:

- *Ցանկալի է, որ յուրաքանչյուր դասի ընթացքում երեխաները ընթերցեն տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ: Եթե ստեղծագործությունը ծավալով մեծ չէ, այն ընթերցում են ամբողջական, իսկ եթե ծավալուն է, ընթերցում են 2-3 դասերի ընթացքում կամ ընթերցում են հատվածներ այն գրքերից,որոնք կարդում են ամբողջ դասարանը: Հաճախ ընթերցում են բարձրաձայն: Իրականացվում է նաև և՛ լուռ ընթերցանություն, և՛ թատերականացում:*
- *Յուրաքանչյուր դասին անհրաժեշտ է անպայման ժամանակ հատկացնել ընթերցած ստեղծագործության վերլուծությանը ոչ միայն զրույցի ձևով (պատասխանել ուսուցչի տված հարցերին), այլև ազատ ինքնաարտահայտման միջոցով: Ցանկալի է տալ հետևյալ բնույթի հարցեր. «Գրքի մեջ ինչն ամենից շատ դուր եկավ» և այլն:*
- *Բառային աշխատանք, ինչպես նաև լեզվական միջոցների շուրջ աշխատանքն ինքնուրույն ընթերցանության դասերին խաղում է սոսկ օժանդակող դեր: Ինքնուրույն ընթերցանության դասերին հնարավոր չէ բացատրել բոլոր անծանոթ, անհասկանալի բառերը: Բառային աշխատանքընշանակալից չափով պետք է կատարել՝ ուղղորդելով դեպի բառարանները, տեղեկատու գրականությունը և այլն:*
- *Ինքնուրույն ընթերցանության դասերին երեխաները համառոտ վերարտադրում են ենթերցած գրքի բովանդակությունը, վերարտադրում են ընթերցած գրքի բովանդակությունը, վերարտադրում են իրենց դուր եկած հատվածները, ընթերցածը վերարտադրում են դերերով և այլն, ինչպես նաև ինքնուրույն ընթերցանության դասերն ավելի շատ պայմաններ են ստեղծում բավականին մեծ ծավալով ստեղծագործական բնույթի աշխատանքներ կատարելու համար. ընթերցածի բովանդակության նկարազարդում (բառային և գրաֆիկական), ապլիկացիա, ծեփակերտում, ստեղծագործության ներկայացում երաժշտական ձևավորմամբ, նկարաշարի ստեղծում և այլն:*

1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Չորրորդ դասարանում կատարել եմ «Թագավորն ու խաբեբան» հեքիաթի հետազոտություն և որպես նախաբան ինքնուրույն ընթերցանության

ժամերին առաջարկում եմ կանխագուշակել,թե որ ստեղծագործություններն են սկսվում. «Լինում է, չի լինում», «Կար չկար»,«Ժուկով ժամանակով» (հեքիաթները): «Երեխանե՛ր,այսօր մենք բոլորս կլինենք հրաշագործներ:Նշե՛ք ինչ հեքիաթներ գիտեք:Պատասխանները լսելուց հետո առաջարկում եմ գնալ տոնավաճառ և տեսնել մեր ունեցած գրքերը համապատասխանում են արդյոք մեր թեմային և որ հեղինակի գրքերն են: Ո՞ր գիրքը չի համապատասխանում մեր թեմային ևինչու՞:Բոլոր հեքիաթներում բարին հաղթում է չարին,կատարվում են հրաշքներ: Բոլոր հեքիաթներում գերիշխում է յոթ թիվը «7 օր, 7 գիշեր հարսանիք արեցին», «7 որդով սեղան նստեցին», «7 սարից այն կողմ» և այլն: «Երեխանե՛ր եկեք հիշենք մեր իմացած հեքիաթները»: Տալիս եմ մի թելի կծիկ և առաջարկում եմ խառը հերթականությամբ վերհիշել մեր անցած կամ լսած հեքիաթները: Ինչպես նկատեցիք մենք այսօր ծանոթանալու ենք Վ. Սարոյանի «Թագավորն ու խաբեբան»հեքիաթին: Առաջարկում եմ կարդալ լուռ և շատ ուշադիր,որպեսզի կարողանան պատասխանել իմ առաջադրված հարցերին: Կարդալուց հետո աշակերտները պատասխանում են իմ հարցերին,այսպիսով պարզ է դառնում,թե ով է հասկանալով կարդում: Հետո կարդում են բարձրաձայն ,բացատրելով ու մեկնաբանելով, որ հասկանան բոլոր աշակերտները: Հարցերով փորձում ենք մեկնաբանել, տեքստը փորձում ենք բաժանել մասերի,վերնագրել: Հետո դասարանը բաժանում ենք խմբերի և առաջարկում ստեղծել գրքեր: Խմբերին առաջարկում եմ ամբողջ հեքիաթը բաժանել հինգ մասի (հիշելով արդեն դասարանում կատարած աշխատանքը), ամեն մասը ներկայացնել մեկ նախադասությամբ, այնպես որ հեքիաթը չիմացողը այդ հինգ նախադասությամբ հասկանա հեքիաթ: Մինչ երեխաները կազմում են նախադասությունները, ես մոտենում եմ խմբերին և նախապես սեղանին դրված A4 ֆորմատի թղթերը ամրացնում եմ գրքի ձևով՝ միարժամանակ ցույց եմ տալիս,թե ինչպես կարելի է սովորական թղթից գիրք ստանալ: Աշակերտները խմբում կատարում են աշխատանքի բաժանում գեղեցիկ ձեռագիր ունեցողները գրում են ամեն թղթի վրա կազմած նախադասությունները,ձևավորում են վերնագրերը, լավ նկարողները նկարում են ամեն էջի վրա: Կարող եմ առաջարկել նաև պատրաստել բուրգ,սակայն այս անգամ տեքստը պետք է բաժանել երեք տրաբանական մասի (Այստեղ նրանք հիշում են, թե թե ինչպես են տեխնոլոգիայի ժամին առանց մկրատի քառակուսի պատրաստում): Վերջում

իրենց պատրաստած գրքերը ցուցադրում են և ամեն խումբ ներկայացնում է իր կազմած տեքստերը:

Առաջարկում եմ ինքնուրույն ընթերցանության դասերի անցկացման մի շարք ոչ ստանդարտ ձևեր.

Դաս-հեքիաթն անցկացվում է անսովոր ձևով: Ամբողջ դասասենյակը փոխակերպվում է հեքիաթային աշխարհի, իսկ երեխաները՝ հեքիաթային հերոսների:

Դասը կարելի է անցկացնել մեկ կամ մի քանի հեքիաթների բովանդակության շուրջ: Դա կարող է լինել ժողովրդական կամ հեղինակային հեքիաթ: Դաս-հեքիաթը հեքիաթային կարող է լինել իր անցկացման ձևով, երբ դասի ընթացքում օգտագործվում են հեքիաթային իրեր, երեխաներին օգնության են հասնում հեքիաթային հերոսները, դասի ընթացքում օգտագործում են հեքիաթային արտահայտություններ, բառեր: Այսպիսի դասն իր մեջ կարող է ներառել թատերական ներկայացման տարրեր:

Դաս-ցերեկույթը կարելի է անցկացնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում 12 անգամ: Դաս-ցերեկույթը կարող է լինել հետևյալ թեմաների շուրջ՝«Հեքիաթների աշխարհում» «Մեզ հասակակից գրական հերոսները» և այլն: Այսպիսի դասերին կարելի է նաև հյուրեր հրավիրել: Դասի տևողությունը մեկ դասաժամ է, սակայն ինչպես դաս-հեքիաթի դեպքում, ենթադրում է բավականին մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք: Դաս-ցերեկույթը նախապատրաստում են հենց իրենք՝ աշակերտները, դրա բովանդակությունը կազմված է լինում այն նյութերից, որոնք ուսումնասիրել են ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում, և որոնք հատկապես դուր են եկել աշակերտներին:

Երեխաները նախապես նկարազարդում են ստեղծագործությունները, ընտրում են գրքեր, պատրաստում են ինքնաշեն գրքեր, կերպարվեստի և տեխնոլոգիայի դասերին կատարում են ստեղծագործական աշխատանքներ՝ դաս-ցերեկույթում ընդգրկված նյութերի բովանդակության վերաբերյալ: Նրանք վերհիշում են թեմային համապատասխան հանելուկներ, հաշվելուկներ, շուտասելուկներ, բանաստեղծություններ, ինչպես նաև հանդես են գալիս դերային խաղով:

Կարելի է կազմակերպել գրքերի շնորհանդես: Երեխաներն ընտրում են գիրքը, պատրաստում են հաղորդում դրա վերաբերյալ. Ինչու՞ է այդպես վերնագրված, ո՞վ է հեղինակը, ովքե՞ր են հերոսները և այլն:

Շատ հետաքրքիր է անցնում «Լավագույն ընթերցող» մրցույթը: Ուսուցիչը ցույց է տալիս որևէ գրքից նկարազարդում, իսկ աշակերտները կռահում են գրքի վերնագիրը, ստեղծագործության վերնագիրը, թվարկում են հերոսներին և այլն:

Դաս-ցերեկույթի ընթացքում կարելի է անցկացնել տրված թեմայով կամ ժանրով գրքերի ճիշտ ընտրության մրցույթ: Դասարանը բաժանվում է խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվում է գրքերի հավաքածու (10-12 անուն), որոնցից խումբը պետք է առանձնացնի տրված թեմայով գրքերը: Օրինակ՝ առաջին խումբն ընտրում է պատմվածքներ երեխաների մասին, երկրորդ խումբը՝ բանաստեղծություններ բնության մասին, երրորդ խումբը՝ հեքիաթներ կենդանիների մասին:

Դաս- ճանապարհորդությունը վառ, հուզական խաղային ձև է, որը հրապուրում է երեխային հենց դասի սկզբում, և մինչև դասի վերջ երեխայի ուշադրությունը չի շեղվում: Ճանապարհորդել կարելի է մեկ գրքի էջերով, մեկ հեղինակի գրքի էջերով, այն, ժամանակաշրջանով, որի ընթացքում ապրել են գրական ստեղծագործության հեղինակը կամ հերոսները, երկրներով, որտեղ ապրել են նրանք և այլն:

Մյուս դասերից դաս-ճանապարհորդությունը տարբերվում է քարտեզի առկայությամբ, որտեղ նշվում են կայարանները, կանգառները, որտեղ ընտրված երթուղուն համապատասխան պետք է հայտնվեն մասնակիցները: Ճանապարհորդության համար որոշվում է փոխադրամիջոցը՝ ինքնաթիռ, ավտոբուս, հեծանիվ, ավտոմեքենա, աստղանավ, ժամանակի մեքենա, թռչող գորգ և այլն: «Ճանապարհորդության» ընթացքում կարող են լինել պարեր, երգեր, դերային խաղեր:

Դաս-խաչբառի հիմքը խաչբառի հարցերի պատասխանների որոնումն է: Հարցերը տրված են մեկ կամ մի քանի գրական ստեղծագործությունների շուրջ: Աշխատանքը կարելի է զուգակցել գրական-դերային խաղի հետ, երբ իրենք՝ հերոսներն են խաչբառի հարցերը տալիս ճանապարհորդությամբ, երբ յուրաքանչյուր կանգառում աշակերտները որոնում են խաչբառի մեկ հարցի պատասխանը, դերային խաղով, երբ խաչբառի յուրաքանչյուր հարցի պատասխանը տալիս են բեմականացման միջոցով և այլն:

Դաս-հանելուկ անցկացման ընթացքում յուրաքանչյուր առաջադրանք ուղեկցվում է կամ հանելուկի պատասխանը կռահելով, կամ էլ հանելուկ կազմելով: Դասի սկզբում կարելի է հնչեցնել հանելուկը, որի պատասխանը երեխաները կարող են փնտրել ամբողջ դասի ընթացքում: Հանելուկի

պատասխանը գտնելը կարող է դառնալ խմբային աշխատանքի սկիզբ՝ տարբեր ուղղություններով. ծանոթացում հեղինակի ստեղծագործություններին, ստեղծագործության վերլուծություն, առանձին հերոսների վարքագծի գնահատում, տարբեր ստեղծագործությունների հերոսների վարքագծերի համեմատական վերլուծություն և այլն:

Դաս-դիմանկարի անցկացման արդյունքը պետք է լինի «դիմանկարի» ստեղծումը: Դա կարող է լինել գեղարվեստական պատկերների զուգակցումը, հերոսնորի պատկերները:

«Դիմանկարը» ստեղծվում է որոնողական, ստեղծագործական բնույթի անհատական և խմբային առաջադրանքների կատարման միջոցով:

Դաս-մրցույթի ընթացքում դասարանը բաժանվում է խմբերի, մշակվում են մրցութային առաջադրանքների գնահատման չափանիշները: Ընտրվում է գնահատող հանձնաժողով, որի կազմում կարող են լինել ծնողներ, բարձր դասարանների սովորողներ:

Մրցույթը կարելի է անցկացնել որևէ մարզական խաղի ձևով, օրինակ՝ ֆուտբոլի, երբ դասարանը բաժանվում է խմբերի, և յուրաքանչյուր ճիշտ պատասխանը նշվում է հակառակորդի դարպասում հերթական գոլով: Այսպիսի դասի անցկացման համար անհրաժեշտ է համապատասխան կահավորանք:

Դաս-հանդիպումը կարելի է անցկացնել հարցազրույցի ձևով: Երեխաները, դառնալով լրագրողներ, հարցազրույց են վարում «հեղինակի», «հերոսների հետ», որոնց դերում կարող են հանդես գալ բարձր դասարանցիները: «Լրագրող» աշակերտները պետք է նախապես պատրաստեն հարցերը՝ հավաքելով տեղեկություն գրողի կյանքի և ստեղծագործության մասին՝ մեկ անգամ ևս ընթերցելով ստեղծագործությունները: Այսպիսի դասի արդյունքը կարող է լինել թերթի լույսընծայումը, փոքրիկ շարադրություններով ինքնաշեն գրքերի ստեղծումը և այլն:

Ինքնուրույն ընթերցանության դասընթացի ամբողջ ուսումնադաստիարակչական աշխատանքը ցանկալի է պլանավորել կիսամյակի կտրվածքով: Պլանավորելիս ամենից առաջ պլանում զետեղում եմ ինքնուրույն ընթերցանության դասերի թեմատիկան, ընտրում եմ և այն գրքերը կամ ստեղծագործությունները, որոնք պետք է ընթերցվեն դասարանում բարձրաձայն, և այն գրքերն ու ստեղծագործությունները, որոնք երեխաները պետք է ընթերցեն ինքնուրույն:

3. Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները և ձևեր

Ինքնուրույն ընթերցանության արդյունավետ կազմակերպումը կարող է իրականացնել մի շարք ուսումնական նպատակներ, լուծել կրթական և դաստիարակչական խնդիրներ.

1. Կհաստանան երեխաների աշխարհաճանաչողական գիտելիքները (նյութը ճանաչողական գիտելիք կարող է պարունակել, որով ուսուցումը պահպանում է իր զարգացնող բնույթը, ընթերցումն ինքնանպատակ չի դառնում):

2. Կիրագործվի երեխաների համակողմանի դաստիարակությունը (ընկերասիրություն, աշխատասիրություն, հոգատարություն, կենսուրախություն, լավատեսություն՝ տպավորիչ օրինակների, պատկերավոր ու գեղեցիկ խոսքի միջոցով):

Առաջին դասարանի հետայբբենական շրջանից սկսած՝ արտադասարանային ընթերցանությունը նպատակահարմար է անցկացնել փոքր չափաբաժիններով: Այդ աշխատանքը կարելի է դարձնել համարյա ամենօրյա: Փոքր ծավալով տեղեկատվական նյութերը կարդալու համար հանձնարարվում են տանը: Վերջիններս նույնպես պետք է համապատասխանեն վերլուծության ենթարկվեն դասարանում. Հարցնել կարդացած նյութի հեղինակի, հերոսների, հիմնական բովանդակության մասին, կարողանալ վերարտադրել կարդացածի բովանդակությունը, պարզ գնահատումներ տալ գործող անձերի և այլն: Որոշ դեպքերում թեմատիկ առումով ինքնուրույն ընթերցանության նյութերը կարող են համապատասխանել դասագրքի ընդհանուր թեմաներին կամ թեմատիկ խմբերի հիմնական ուղղություններին, որպեսզի նպաստեն ուսումնասիրվող նյութերի ավելի խոր յուրացմանը: Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս որպես հնար կարելի է օգտագործել բարձրաձայն կարդալը (երեխաների համար զվարճալի կարող է լինել, երբ նրանց առաջարկվի ձայնագրել սեփական խոսքը բարձրաձայն կարդալիս, ինչը հնարավորություն կտա լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու դրա արտահայտչականությունը): Ամենակարևորը գործոններից է հասկանալով կարդալը: Դրան հնարավոր է հասնել աստիճանաբար: Երեխան պետք է հասկանա իր կարդացածը, ինչը պետք է հետաքրքրի նրան: Այս նպատակով հարկ է նրանց առաջարկել

հետաքրքրաշարժ բնագրեր, իրենց հոգեհարազատ պատմություններ: Երեխան կարդում է բազմաբնույթ նյութեր՝ մեկը մյուսից հետաքրքիր, մեկը մեկից զարմանալի, մեկը մեկից ձգող: Կարդում է հաճույքով, առանց հարկադրանքի, ուզում է իմանալ պատճառահետևանքային կապերը, ուրախանում է գտածով, ձգտում է լուծել, գտնել պատասխանը: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը՝ պայման: Զարգացնելով կարդալու կարողությունը՝ երեխան աստիճանաբար սովորում և վարժվում է շշուկով կարդալ և ընկալել կարդացածը: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար ուսուցիչն իր զինանոցում ունի բացատրական ընթերցանության մեթոդը: Ճիշտ կարդալու կարողությունների ձևավորմանը նպաստում են լեզվական գիտելիքները և բարձրաձայն ընթերցանությունը: Սահուն կարդալու համար անգնահատելի են բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շշուկով կարդալը: Արտահայտիչ կարդալու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը նպաստում են բարձրաձայն ընթերցանությունը, կետադրական նշանների գործածությանը տիրապետելը ոչ միայն գրելիս, այլև ընթերցելիս, դերային ընթերցումները, բեմականացումները (սեր, գովք, խրախուսանք, ուրախություն, ափսոսանք, զարմանք, դժգոհություն): Ձևավորելով և զարգացնելով կարդալու կարողությունները՝ ինքնուրույն ընթերցանությունը կատարում է նաև այլ գործառույթներ.

2. Խոսքի զարգացում: Գիրք կարդալը «բացատում է երեխայի լեզուն», նա ավելի ու ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել, եզրակացություններ անել, դառնում է ինքնուրույն և ինքնավստահ (օրինակ՝ կազմակերպվում է կարդացած նյութի քննարկում, աշակերտին տրվում է դերակատարման, հերոսների, դեպքերի հետ համաձայնելու, չհամաձայնելու, նոր ուղիներ, ելքեր, այլ ավարտ մշակելու հնարավորություն, հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ իրավիճակներից դուրս գալու հմտություն):

2. Երևակայության զարգացում: Գիրքը հուզական բարենպաստ միջավայր է ստեղծում երեխայի համար: Դրական անձանց, մարդկային կերպարով բույսերի, կենդանիների, զանազան շնչավորված առարկաների դերերը նպաստում են երեխաների երևակայության զարգացմանը, ընթերցելը դառնում է հետաքրքիր և զվարթ:

3. Մտածողության, ուշադրության, հիշողության զարգացում: Ընթերցելիս երեխան համեմատում է, համադրում և մասնավորեցնում:

Արտադասարանային ընթերցանության նյութերը պետք է լինեն՝ բովանդակությամբ մատչելի և հետաքրքիր, տարիքային առանձնահատկությունների տեսանկյունից՝ ծավալով ոչ շատ մեծ, դինամիկ սյուժեով հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների արձակ և չափածո ստեղծագործություններ և ժողովրդական նմուշներ: Ցանկալի է, որ դրանք վերաբերեն հայրենի երկրին, բնությանը, ճանապարհորդություններին, երեխաների կյանքին, հիշեցնեն սեփական կյանքի հետ կապված իրավիճակներ, լինեն հումորային պատումներ, արվեստագետների կյանքից հետաքրքրաշարժ դրվագներ:

Ուսումնական գործունեության պլանավորումը կարդացածի վերլուծության տեսանկյունից.

- *Ճիշտ տեքստի սեփական ընկալումը:*
- *Նկարելով կամ բանավոր խոսքով կազմել տեքստի պլան:*
- *«Դուր է գալիս, դուր չի գալիս» դատողությունների հիմնավորում:*
- *Երկխոսություն կարդացածի հերոսների և դեպքերի մասին:*
- *Երևակայության միջոցով նոր լուծումներ գտնել տեքստում պատկերված իրադրության համար:*
- *Վերարտադրել կարդացածը ուսուցչի հարցերի օգնությամբ:*
- *Պատմել ըստ հիշողության*
- *Նկարել կարդացածի թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել դրանք:*
- *Բեմականացնել կարդացածի թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել դրանք:*
- *Բեմականացնել ստեղծագործություններ, մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը.*
- *Հիշատակել կարդացածին համապատասխան մաղթանքներ, առած-ասացվածքներ:*
- *Կարևորել և կիրառել ոչ խոսքային միջոցներ (օրինակ՝ մնջախաղ):*
- *Սեփական կենսափորձից մտաբերել նման օրինակներ:*
- *Ստեղծել դասարանական գրադարան:*
- *Կազմակերպել նկարների և ստեղծած աշխատանքների ցուցահանդես:*

Արտադասարանային ընթերցանության կազմակերպումը կարող է իրականացնել հետևյալ նպատակները.

- *Կարդալու կարողությունների ձևավորում և անընդհատ զարգացում*
- *Արտասանական ունակությունների զարգացում*

- *Հաղորդակցական կարողությունների զարգացում*
- *Հերոսների զգայական վիճակը գնահատելու կարողության մշակում*
- *Աշխարհաճանաչողական գիտելիքների ընդլայնում*
- *Խոսքի և մտածողության զարգացում*
- *Միտքը ձևակերպելու կարողության մշակում*
- *Կարդացածը բնագրին հարազատ վերարտադրելու հմտությունների մշակում*
- *Խոսքային ստեղծագործության հանդեպ հետաքրքրության պահպանում*
- *Գրական որոշ ժանրերի մեջ կողմնորոշվելու կարողությունների մշակում*
- *Ակտիվ բառապաշարի հարստացում*
- *Նյութի վերաբերյալ կարծիք հայտնելու ունակության ձևավորում, զարգացում*
- *Շրջակա աշխարհի մասին գիտելիքների և տեղեկությունների համալրում, ամբողջացում*
- *Մարդկանց, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում*

Ներկայացնենք արտադասարանային ընթերցանության կազմակերպման սեփական փորձի որոշ դրվագներ: Նախ երեխաների միջավայրում անհրաժեշտ է ստեղծել հանձնարարված առակը, հեքիաթը, պատմվածքը կարդալու դրդապատճառներ (մոտիվացիա):

Եթե ուզում ենք, որ երեխան ցանկանա կարդալ, ուրեմն առաջարկվող նյութը պիտի լինի գրավիչ: Օրինակ՝ «Համարյա դեդեկտիվ պատմություն», «Փոքրիկն ու տանիքում ապրող Կարլսոնը», «Նիլսի զարմանահրաշ ճամփորդությունը» և այլն:

Խթանման փուլ նպատակահարմար է սկսել վերնագրից: Վերգնագիրն է հենց առաջին ծանոթությունը գրքին, հեքիաթին, պատմությանը, առակին. այսինքն՝ գրական ստեղծագործության այցետոմսն է: Այն օգնում է ներթափանցել գրքի մեջ, ինչպես, ասենք, ակամա խանութ ես մտնում, եթե ցուցանակը հետաքրքիր է ու գրավիչ: Ուսուցիչը մտագրոհի կամ «Կանխատեսումներ զույգերով» մեթոդով քննարկում է հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է արտահայտում վերնագիրը:

- Կարո՞ղ ենք միայն վերնագրի միջոցով կռահել, թե ինչի մասին է լինելու պատմությունը: Ինչո՞ւ:

- Ի՞նչ է պատմում վերնագիրը նյութի մասին:

-Փորձի՛ր կռահել, թե ինչի մասին է այս պատմությունը:

Այս նախաբանից հետո, ամենայն հավանականությամբ, հանձնարարվող նյութը կարդալու ցանկությունն արդեն առկա է: Ուսուցիչն այս կերպ շարժվում է աշակերտների հետաքրքրությունը:

Իմաստի ընկալման փուլում աշակերտը կարդում է նյութը (դպրոցում կամ տանը): Առաջարկվում է, օրինակ, այն կարդալ «Փոխգործուն գրառումների համակարգ» մեթոդով: Կրտսեր դպրոցում գերադասելի է օգտագործել երկուսից ոչ ավելի նշան՝ «+»՝ «Ես սա գիտեմ» և «-»՝ «Ես սա չգիտեմ»: Այս մեթոդի կիրառումը կարդալու ընթացքում կօգնի աշակերտներին վերահսկել սեփական ընկալումը: Արդյունավետ է՝ կարդալիս կիրառել «Երկակի գրառումների օրագիր» մեթոդը: Ընթերցելուց հետո էջի հատվածում նշում են այն դրվագը, որը, իրենց կարծիքով, ամենակարևորն է: Իսկ մյուս մասում մեկնաբանում են, թե ինչու են այդ հատվածը կարևորում, ինչու է այն գրավել իրենց ուշադրությունը, ինչի մասին է իրենց մտածել տալիս: Կարելի է ստեղծել համագործակցային ուսումնառության խմբեր՝ կարդացածը ներկայացնելու նպատակով: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ունենալ որևէ դեր՝ գրանցող, զեկուցող, ստուգող, ամփոփող, ընթերցող և այլն: Առաջարկում ենք օգտագործել նաև «Հետազոտության ուղենիշեր» մեթոդը: Աշակերտներին տրվում են ուղենիշներ, որոնք նրանց ուշադրությունը կբևեռեն կարդացածի կարևորագույն մասերի վրա և կզարգացնեն մտածողությունը: Օրինակ. «Գտնել այն տողերը, որոնք արտահայտում են հերոսներից մեկի երախտագետ լինելու շնորհը»:

Կշռադատման փուլում աշակերտները հետադարձ հայացք են գցում կարդացածին, տալիս են հարցել, կատարում մեկնաբանություններ, բանավիճում են: Այս փուլում առաջարկում ենք կիրառել ընթերցողից պատասխան ակնկալող հարցերի մեթոդը:

-Ի՞նչ նկատեցիք այս առակում, ինչի՞ մասին այն ստիպեց մտածել:

-Ո՞րն էր ամենակարևոր ասելիքը:

-Ո՞րն էր ձեր կարդացածի ամենակարևոր նախադասությունը:

-Ո՞րն էր, ձեր կարծիքով, ամենակարևոր բառը:

Կարելի է այս փուլում կիրառել նաև «Ընդհանուր հարցման քննարկում» մեթոդը: Աշակերտներին հանձնարարվում է մտածել և քննարկել նախապես պատրաստված մեկնաբանող հարցերը (դրանք հստակ, կոնկրետ հարցեր են,

որոնք վերաբերում են տեքստում արտացոլված որևէ խնդրի, որին կարելի է տալ մի քանի լուծում):

Ամփոփում. Ուսուցիչը պետք է նախապես որոշի, թե որն է լավագույն հնարավոր ավարտը, յուրացման ինչպիսի խորություն է հնարավոր, ինչ պետք է աշակերտը վերցնի կարդացածից: Ըստ այդ պահանջների բավարարման արդյունքների էլ կկատարվի ամփոփումը:

Վերջում՝ ամփոփման փուլից հետո կարելի է ծավալել մի շարք աշխատանքներ. Ստեղծագործական գրավոր աշխատանք, հարցազրույց, ցուցապաստառների ստեղծում, բեմականացումներ, հարցում-հետազոտություններ, անկախ հետազոտություններ:

Ինքնուրույն ընթերցանության դասերն ունեն որոշակի առանձնահատկություններ: Առանց այդ առանձնահատկությունների հաշվառման՝ այդ դասերը չեն կարող իրականացնել իրենց առջև դրված խնդիրները:

Այսպես.

1. Յորաքանչյուր դասին ցանկալի է անցկացնել յուրօրինակ հաշվետվություն այն մասին, թե ինչ են երեխաներն ինքնուրույն ընթերցել: Երեխաները դասարան են բերում և ցույց տալիս այն գրքերը, որոնք նրանք ընթերցել են արձակուրդին (ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային), անցած մեկ շաբաթվա (երկրորդ դասարանում) կամ երկու շաբաթվա ընթացքում (երրորդ և չորրորդ դասարանում) կամ ընթերցում են տվյալ պահին: Ուսուցիչը ստեղծում է այնպիսի իրավիճակ, որտեղ կատարվում է ընթերցած գրքերի վերաբերյալ տպավորությունների փոխանակում:

2. Յուրաքանչյուր դասին երաշխավորություններ են տրվում նոր գրքերի վերաբերյալ: Այդ երաշխավորությունների ձևերը բազմազան են՝ և՛ կարծիքների փոխանակում, և՛ երաշխավորություն ուսուցչի կողմից՝ տվյալ գրքի ցուցադրումով, և՛ ոչ մեծ ցուցահանդեսի կազմակերպում դասարանում՝ թեմատիկ կամ հեղինակային, երաշխավորվող գրքից մի հատվածի ընթերցում՝ գրքի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու նպատակով, նկարազարդման ցուցադրում և այլն:

3. Ցանկալի է, որ յուրաքանչյուր դասի ընթացքում երեխաներն ընթերցեն տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ: Եթե ստեղծագործությունը ծավալով մեծ չէ, այն ընթերցում են ամբողջական, իսկ եթե ծավալուն է, ընթերցում են 2-3 դասերի

ընթացքում կամ ընթերցում են հատվածներ այն գրքերից, որոնք կարդում է ամբողջ դասարանը: Հաճախ ընթերցում են բարձրաձայն: Իրականացվում է նաև և՛ լուռ ընթերցանություն, և՛ դերերով ընթերցանություն, և՛ թատերականացում:

4. Յուրաքանչյուր դասին անհրաժեշտ է անպայման ժամանակ անցկացնել ընթերցած ստեղծագործության վերլուծությանը ոչ միայն զրույցի ձևով (պատասխաններ ուսուցչի տված հարցերին), այլև ազատ ինքնարտահայտման միջոցով: Ցանկալի է տալ հետևյալ բնույթի հարցեր «Ի՞նչ կարող ես ասել այս գրքի մասին» կամ «Գրքի մեջ ի՞նչն ամենից շատ քեզ դուր եկավ» և այլն:

5. Բառային աշխատանքը, ինչպես նաև լեզվական միջոցների շուրջ աշխատանքն ինքնուրույն ընթերցանության դասերին խաղում է սոսկ օժանդակող դեր:

Ինքնուրույն ընթերցանության դասերին հնարավոր չէ բացատրել բոլոր անծանոթ, անհասկանալի բառերը: Բառային աշխատանքը նշանակալից չափով պետք է կատարել՝ ուղղորդելով դեպի բառարանները, տեղեկատու գրականությունը և այլն: Այլ խոսքով՝ այդ աշխատանքը մոտ է այն ձևերին, որոնք կիրառվում են կյանքում ցանկացած գիրք ընթերցելիս:

6. Ինքնուրույն ընթերցանության դասերին երեխաները համառոտ վերարտադրում են ընթերցած գրքի բովանդակությունը, վերարտադրում են իրենց դուր եկած հատվածները (ընտրովի վերարտադրություն), ընթերցածը ներկայացնում են դերերով և այլն, ինչպես նաև ինքնուրույն ընթերցանության դասերն ավելի շատ պայմաններ են ստեղծում բավականին մեծ ծավալով ստեղծագործական բնույթի աշխատանքներ կատարելու համար. Ընթերցածի բովանդակության նկարագարդում (բառային և գրաֆիկական), ապլիկացիա, ծեփակերտում, ստեղծագործության ներկայացում երաժշտական ձևավորմամբ, նկարաշարի ստեղծում և այլն:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը մեծացնելու, այդ դասաժամերն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու նպատակով կազմակերպում ենք կառուցվածքով ոչ ստանդարտ բնույթի դասեր:

Որպեսզի դասերն անցնեն ստեղծագործական մթնոլորտում, և երեխաները հնարավորություն ունենան դրսևորել իրենց ունակությունները, ցանկալի է, որ առաջադրանքները լինեն անսովոր.

1. զարգացնեն տրամաբանությունը, հնարամտությունը, կերպարային մտածողությունը,
2. ըստ բարդության լինեն տարբեր մակարդակների,
3. ունենան գործնական նշանակություն և միջառարակայական բովանդակություն,
4. լինեն հետաքրքրաշարժ իրենց ձևով, բովանդակությամբ կամ լուծման միջոցներով, ունենան անսպասելի արդյունք:

4. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԸ

Թեմատիկան և գրականության ընտրությունը կատարվում է՝ ելնելով ծրագրային պահանջներից: Եթե ուսուցիչն օգտվում է ուսուցչի ձեռնարկներում զետեղված օրինակելի պլանավորումից, ապա պետք է նկատի ունենալ, որ դրանք ընդամենն օրինակելի պլանավորումներն են, և ուսուցիչը, հաշվի առնելով տեղական պայմանները, երեխաների պատրաստվածության մակարդակը, դպրոցական գրադարանում գրքերի առկայությունը, կարող է ինքնուրույն ընտրել ստեղծագործությունները՝ երեխաների տարիքային առանձնահատկությունների համապատասխան: Մեզ տրվում է ստեղծագործական որոնումների իրավունք, ինքնուրույն ընթերցանության դասերի թոմատիկայի ինքնուրույն ընտրություն: Դասերի ձևերի, մեթոդների և հնարների բազմազանությունը հնարավորություն է ընձեռում մեզ ստեղծել կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրությունների ձևավորման հիմքը:

Կազմակերպելով ինքնուրույն ընթերցանության դասը՝ ես ղեկավարվում եմ հետևյալ կանոններով:

1. Ինքնուրույն ընթերցանության դասին յուրաքանչյուր աշակերտի հանդիպումը գրքի հետ պետք է առաջացնի հետաքրքրություն, այսինքն՝ երբեմն երեխան չպետք է նախապես իմանա, թե ինչ գիրք ինքը պետք է ընթերցի ինքնուրույն ընթերցանության դասին: Այս դեպքում նա կարող է իրականացնել ինքնուրույն ընթերցողական գործունեության առաջին պահանջը՝ մտորել գրքի շուրջ մինչ ընթերցումը, տրամադրվել դրա բովանդակության ինքնուրույն լիարժեք ընկալմանը:
2. Յուրաքանչյուր երեխա պետք է իմանա, որ մանկական գրքի շուրջ ինքնուրույն աշխատանքի ընթացքում չի կարելի խանգարել ընկերոջը: Պետք

է սովորեցնել ինքնուրույն աշխատել գրքի շուրջ (դիտել, ընթերցել և այլն) մինչև այն պահը, երբ ուսուցիչը կառաջարկի բոլորին սկսել կոլեկտիվ աշխատանքը:

3. Կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման կարգը նույնպես պետք է խթանի երեխաների մեջ մշակել այն հարցերին ինքնուրույն պատասխանելու կարողությունները, որոնք կօգնեն ընթերցողին ստուգել, թե արդյո՞ք ճիշտ է ընկալում գրքի բովանդակությունը ընթերցանության ընթացքում և ընթերցանությունն ավարտելուց հետո:

Այսպիսի հարցերից են.

- Ի՞նչ գիրք ես կարդացի:

- Ինչպե՞ս է դրա վերնագիրը: Ի՞նչ կարող եմ ասել վերնագրի մասին:

- Ինչպե՞ս են անվանում այդ ստեղծագործությունը:

- Ինչի՞ մասին է պատմվում ստեղծագործության մեջ:

- Ե՞րբ և տարվա ո՞ր եղանակին են կատարվում սեղծագործության մեջ ընդգրկված դեպքերը: Որտեղի՞ց ես այն իմացա (տեքստի բովանդակությունից, նկարազարդումից):

- Ո՞ր հերոսն է ինձ դուր գալիս: Ո՞րը դուր չի գալիս: Կամ՝ ի՞նչն ավելի տպավորվեց, ի՞նչն էր անսովոր, զվարճալի, զարմանալի: Ինչու՞ :

Երեխաները, աշխատելով ներցած գրքի շուրջ, ակամա սովորում են, ավարտելով ինքնուրույն ընթերցումը, մտորել ընթերցածի շուրջ՝ ուղղուրդվելով արդեն իրենց հայտնի հարցերի համակարգով:

4. Գրքի շուրջ տրվող վարժությունները հետապնդում են հետևյալ նպատակները.

- *Մինչև ընթերցելը մշակել գրքի մտավոր բովանդակության որոշման կարողությունները՝ դրա երեք հիմնական արտաքին հատկանիշներով (հեղինակի ազգանունը, վերնագիրը և նկարազարդումը շապիկի վրա կամ տեքստի շուրջ): Այս հատկանիշներից յուրաքանչյուրն աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն ճանաչել,*
- *Ձևավորել ընթերցման թեման որոշելու կարողությունները այն գրքերի համեմատման միջոցով, որոնք ընթերցել և ուսումնասիրել են դասերի ընթացքում, և այն գրքերի, որոնք ընթերցել են ինքնուրույն:*
- *Դասերի ընթացքում գրքերի համեմատման միջոցով ընթերցածի թեման որոշելու, ինչպես նաև ցանկացած անծանոթ գրքի բովանդակության կանխագուշակելու գործընթացը կազմակերպում է անհատապես, իսկ*

ուսումնական գործունեության արդյունքները ստուգվում են կոլեկտիվ աշխատանքի միջոցով:

1) Տրված թեմայով գրքերի ցուցահնդեսի կոլեկտիվ ստեղծումը,

2) Ընթերցածի կոլոկտիվ բեմադրումը,

3) Գրական խաղերի կազմակերպումը,

4) Ընթերցած գրական ստեղծագործության սյուժեի հիման վրա նկարահանված կինոֆիլմի կոլեկտիվ դիտումն ու քննարկումը,

5) Հերոսների պատրաստումը տարբեր նյութերով, էքսկուրսիա դեպի գրադարան, ցրեկույթների կազմակերպումը ինքնուրույն ընթերցածի թեմատիկայով:

Կարելի է տարբերակել ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման երկու տիպի կառուցվածքներ:

I տիպ: Հիմանական. Այն կազմված է 4 կառուցվածքային բաղադրիչներից, որոնց յուրաքանչյուրի իրագործման համար պահանջվում է որոշակի ժամանակ: Այդ բաղադրիչները փոխկապակցված են: Դրանց հաջորդականությունը, որպես կանոն, հետևյալն է:

- *Աշխատանք՝ դասի ընթացքում ընթերցած գրքերի ցուցահանդեսի ստեղծման ուղղությամբ:*
- *Զրույց՝ընթերցած գրքերի հերոսների և հեղինակների մասին:*
- *Ուսուցչի կողմից երեխաների ընթերցողական փորձի լրացում, ընդլայնում, ճշգրտում:*
- *Տնային հանձնարարություն:*

II տիպ: Դաս-հաշվետվություն: Սա հաշվետվություն է ընթերցած գրքերի վերաբերյալ, որի թեման ընտրում են իրենք՝ երեխաներն, իրենց ցանկությամբ: Այնուհետև նրանք պատրաստում են ելույթ՝ ընթերցածի վերաբերյալ: Այսպիսի դասերը կարելի է անցկացնել յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Դաս- հաշվետվության ընթացքում կարելի է անցկացնել զրույցներ, գրական խաղեր, վիկտորինաներ, մրցույթներ ընտրած թեմայով:

Երրորդ և չորրորդ դասարաններում դաս-հաշվետվությունների կազմակերպման գործընթացը փոքր-ինչ բարդանում է, որովհոտև երեխաները երկու շաբաթում (այս դասարաններում գերադասելի է ինքնուրույն ընթերցանության դասաժամերն անցկացնել երկեւ շաբաթը մեկ անգամ՝ երկու ժամով) ընթերցում են տրված թեմայով շատ գրքեր, կամ ծավալուն ստեղծագործություններ՝դրանք ինքնուրույն ընտրելով, ընդ որում՝ այդ ընտրությունը կարող է լինել և՛ հաջող, և՛ անհաջող, և՛ հասկանալով,

իմաստավորված, և՛ ձևական, իսկ ուսուցիչը պետք է այդ երկու դասաժամում ապահովի յուրաքանչյուր աշակերտի առավել ակտիվ մասնակցությունը դասընթացում: Եվ որպեսզի հաղթահարի դժվարությունը, նրան անհարժեշտ է հրաշալի իմանալ դասի թեմայի հետ կապված նյութը և կարողանա քննարկման ներկայացնել այնպիսի հարցեր, որոնք կստիպեն երեխաներին պատասխանը որոնել իրենց ընթերցած գրքերում, ցանկություն առաջացնեն պատասխանել հարցերին՝ օգտվելով իրենց գրքերից: Այնուհանդերձ, ամբողջ դասարանի հետ կատարվող աշխատանքը չի կարելի փոխարինել սովորողների անհատական հաշվետվությամբ, առավել ևս ընթերցածի վերարտադրությամբ:

Յուրաքանչյուր զրույցի արդյունավետությունը ապահովող հնարի ընտրությունն առավելապես կախված է տվյալ դասին ուսումնասիրվող գրական նյութի առանձնահատկությունից, երեխաների ընթերցողական մտահորիզոնի մակարդակից:

Ընթերցած ստեղծագործությունը ներկայացնելու ձևը երեխաները կարող են նաև ընտրել իրենց ցանկությամբ: Միայն այս դեպքում ընթերցողական կարողությունները կդառնան անձնական հաջողության ցուցանիշ: Որպես կանոն՝ երեխաները սիրում են վերարտադրել՝ ընթերցած գրքից ընտրելով որոշակի հատվածներ՝ ըստ նկարագրման, հենակետային բառերի: Ովքեր բանաստեղծություններ են սիրում, արտասանում են անգիր: Իսկ այն ստեղծագործություններում, որտեղ շատ երկխոսություններ կան, ներկայացնում են դերային խաղով:

Ներկայացնում ենք ինքնուրույն ընթերցանության դասերի արդյունավետությանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառմամբ դասերի նմուշ օրինակներ:

Դեռևս ամառային արձակուրդին աշակերտներին կարելի է առաջարկել ընթերցելու իրենց նախընտրած ստեղծագործությունները: Ընդ որում՝ նախօրոք կարելի է պայմանավորվել ծնողների հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, նոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում

ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին ներգրավվում է համապատասխան գործունեության մեջ:

Սեպտեմբերին, հենց ինքնուրույն ընթերցանությանը հատկացված առաջին դասաժամին, որը կարելի է անվանել խորհրդակցության ժամ, յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույն գեղեցիկ ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի հենց իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ներկայացնողներին կարելի է ուղղել հետևյալ հարցերը.

- Ինչու՞ ես ընտրել հատկապես այդ գիրքը:

- Ինչպե՞ս է այն կարդացվում:

- Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության:

- Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Ներկայացնողն իր ընթերցած գիրքը փոխանցում է դասընկերներին, որպեսզի վերջիններս շոշափեն այն, թերթեն դիտեն կազմը, նկարազարդումները և այլն:

Այնուհետև անցկացվում է քվեարկություն և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Միասին սահմանում են այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում նաև տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Աշակերտներն անպայման պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի ըստ այդմ կարողանան պլաններ կազմել: Անպայման աշակերտներին պետք է տեղեկացնել, որ ընթերցելուց հետո համագործակցային խմբում նրանք պետք է մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին՝ ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որոնք նախկինում չէին նկատել:

Այսինքն՝ եթե ընթերցողն իր առջև որոշակի նպատակ կամ խնդիր է դնում նախքան կարդալը, ապա նա ընթերցման ժամանակ վերահսկում է իր սեփական ընկալումը: Երբ գիտակցում է, որ ինչ-ինչ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ, կամ կորցրեց պատմվածքի թելը ձեռնարկում է ճշգրտման քայլեր՝ վերընթերցում է, չհասկացած հատվածը արագ վերանայում, բառի իմաստը փնտրում բառարանում և այլն:

Մինչ կարդալ սկսելը մտագրոհի միջոցով կազմվում է տեքստի բովանդակության կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին:

Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը:

Աշակերտները բաժանվում են 4-5 համագործակցային խմբերի:

Նրանց ուղղվում են որոշակի հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են: Այսպես.

- *Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:*
- *Ի՞նչը դուր չեկավ:*
- *Ինչպե՞ս էր գիրքն սկսվում:*
- *Ինչպե՞ս ավարտվեց:*
- *Արդյո՞ք ընդունելի ավարտ էր:*
- *Ի՞նչն էր կարևոր:*
- *Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում:*
- *Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք:*
- *Ի՞նչ սովորեցիք հերոսներից:*
- *Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ:*
- *Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը:*
- *Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել:*
- *Ինչպիսի՞ն էր տրամադրությունը:*
- *Ի՞նչ կարևոր իրադարձություն եք վերհիշել:*
- *Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը:*
- *Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնու՞մ է:*
- *Ձեր կարծիքով ինչու՞ է հեղինակը գրել այս գիրքը:*

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ կամ վահանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարվում է աշխատանքի բաժանում՝ ընտրելով հետևյալ խորագրերը:

- *Պատմվածքի քարտեզը*
- *Հեղինակի մասին*
- *Պատմվածքի մանրակերտը*
- *Մեր տպավորությունը*
- *Գլխավոր հերոսի բնութագիրը*

- *Նամակ հերոսին*
- *Հերոսի կողմից նամակ*
- *Պատմվածքի տարբեր հատվածների նկարագրդումը:*

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները նույնպես հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկություն ունենան ընթերցելու այն:

Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կարող է միավորել երեխաներին և նրանց մեջ զարգացնել համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

5. Եզրակացություն

Ուսուցչի դերը ինքնուրույն ընթերցանության դասերին շատ կարևոր է և ունի որոշիչ դեր երեխայի հետագա ամբողջ կյանքի համար: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել հնարավորինս շուտ՝ սկսած գրաճանաչության շրջանից: Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպումը:

Ընթերցանություն սիրող ուսուցիչն անպայման կանի ամեն ինչ,որ իր աշակերտը սիրի ընթերցանություն:Որպեսզի ընթերցանությունը երեխայի համար չդառնա փորձություն և պատիժ,նա պիտի հաճույքով և վայելքով ընթերցի: Այդ աշխատանքը այնպիսի զորություն պիտի ունենա, որ երեխաներին կապի գրքին, որ դիմադրի համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դրանցով տրվող հսկայածավալ տեղեկատվության դաշտում պահպանի իրենը, անկրկնելին ու անփոխարինելին: Այդ աշխատանքը հարկավոր է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, որպեսզի գիրքը դառնա երեխայի «լավագույն ուղեկիցն ու բարեկամը»:

Ուզում եմ նաև նշել տարրական դասարանների ուսուցչի դերի մասին: Գաղտնիք չէ, որ դասվարը հեղինակությունի և օրինակ է իր աշակերտի համար և դրանից պետք է օգտվել,ու անձնական օրինակով ցույց տալ գրքի նկատմաբ սերը,հետաքրքրությունը: Չէ՞ որ հետաքրքրությունն է ծնում հետաքրքրություն,իսկ կարդացողը ծնում է կարդացող: Այդ պատճառով ուսուցիչն ինքը պիտի գրագետ,պրոֆեսիոնալ ընթերցող լինի և չնայած

ծանրաբեռնվածությանը պետք է ոչ միայն գտնի ժամանակ գիրք ընթերցելու, այլ նաև մտածելու:

Գրականություն

1. *«50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար»-Հեղինակ՝Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան,Հ.Խաչատրյան:Զանգակ հրատարակչություն 2013թ.*
2. *Уроки внеклассного чтения в 1-4 классах*
3. *Տեղեկագիր 2015.5*
4. *Նախաշավիղ 2015.6*
5. *Специфика уроков внеклассного чтения в начальной школе*

Հավելվածներ

1. *https://litvinovichi.schools.by/pages/uroki-vneklassnogo-chtenija-v-nachalnyh-klassah*
2. *https://nsportal.ru/nachalnaya-shkola/chtenie/2015/04/11/spetsifika-urokov-vneklassnogo-chteniya-v-nachalnoy-shkole*